

ՏԱՍՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мелкъ».
Կամ. Tiflis. Redaction «Mschak».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Աւերող ոգի. — Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մատենադարան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արաքսի լուրեր. — ՀԵՌԱՅԻՐՆԵՐ. — ՅԱՅ-ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Տեղեկագիր Արաքսական թեմի հայ ժողովրդի վիճակի:

ԱՆԵՐՈՂ ՈՂԻ

Բաւական չէ որ Թիֆլիս քաղաքը, որի ազգաբնակչութիւնը տարուց տարի աւելանում է և արդէն 100,000 թւից անցնում է, զուրկ է բուսականութիւնից, թէ նոյն իսկ իր կեդրոնում և թէ իր շրջականութեան, բայց չէ որ մեր եղած այգիների թիւն էլ հեռագետէ պակասում է. — բայց և ինքն քաղաքի ազգաբնակչութիւնը չէր գիտէ գնահատել եղած այգիներն էր:

Անհամարապէս է թէ ո՞ր պատմական դժբաղդ հանգամանքների շնորհով թիֆլիսցիների հայերի և վրացիների մէջ դարձապէս է բնաւորող ոչնչացնող, աւերող ոգին: Բայց թէ այդ աւերող ոգին կայ մեր ամբողջ մէջ, — դա անուրանալի իրողութիւն է: Բաւական չէ այդ ճշմարտութեան մէջ համոզվելու համար ուշադրութեամբ դիտել թէ ինչպէս է վերաբերւում մեր ամբողջ գէպի բուսականութիւնը մեր քաղաքի միակ երկու հրապարակական այգիներում՝ Մուշտայիցում և Ալեքսանդրեան այգիներում, կամ ինչպէս է վարվում նոյն ամբողջ այն մի քանի ողորմելի ծառերի հետ, որոնք դանդաղ են մեր մի քանի գլխաւոր փողոցների երկայնութեամբ:

Թիֆլիսցիների մի անբացատրելի թշնամութիւն ունի գէպի բուսականութիւնը, նրա մէջ ամեն րօպէ նշմարւում է մի աննպաստակ ձգտում քանդելու, ոչնչացնելու, աւերելու բուսականութիւնը:

Ահա թիֆլիսցի ամբողջ հասակ առած մի մարդ անցնում է փողոցում կամ այգիում մի նորատունի ծառի մօտով. նա կը մտնայ ծառին, ու կը սկսի աննպաստակ կերպով իր ձեռքերի ամբողջ ոյժով շարժել

ծառը: Քանի մի լուպէից յետոյ մի երկրորդ մարդ կանցնի նոյն ծառի տակ և սա էլ կը շարունակի նոյն աւերող դործողութիւնը: Դառն անգամ կը տեսնէք, որ հրապարակական այգիում մի ծառիկ ծառի չորս կողմը հաւաքմամբ ամբողջ մարդիկ անողորմաբար պոկում են ծառի վրայից ծառիկներ, տերեւների հետ միասին, և ծառիկները պոկելու ժամանակ ծառի կամ թուփի ճիւղերն էլ անողորմ կերպով կտրատոււմ: Մուշտայիցի այգիում ծառերից խակ-խակ մրգեր է պոկում թիֆլիսցիներ, մրգերի հետ էլ ծառերի ճիւղերը կտրատոււմ: Էնց որ մի տեղ գեղեցիկ կանաչ խոտ է տեսնում մեր ամբողջ մարդը, անմիջապէս սկսում է ոտներով արդիւն խոտը անմիջապէս պարկուճում է խոտի վրա:

Այդ տեսակ աննպատակ, կատաղի թշնամութիւն բնութեան, բուսականութեան դէմ մեր ոչ մի ժողովրդի մէջ չենք տեսնել, չենք էլ կարգադրել, որ այդ տեսակ բնաւորութիւն ունեցող ազգեր լինէին աշխարհի երեսին: Բայց մեր թիֆլիսցի հայի և վրացու մէջ անուրանալի են այդ բարբարոս յատկութիւնները, այդ աննպատակ կատաղութիւնը բուսականութեան դէմ, բնութեան հարստութիւն աւերող այդ անողորմ ոգին:

Եթէ մի թիֆլիսցի թոյլ կը տաք մի մասնաւոր այգի մտնելու, նա չի բաւականապէս դիտելով, ծառիկներից հոտ քաշելով, բայց կը սկսի պոկել ծառիկներն ու նոյն իսկ խակ մրգերը, և այդ էլ այն ձևով կանի, որ ծառիկը կը հանի արմատին հետ միասին, միւրդ այնպէս կը պոկի, որ ծառի ճիւղերն էլ կը կտրուի:

Նոյն անում է մեր ամբողջ և քաղաքի հրապարակական այգիներն: Եւ զարմանալի չէ, որ մեր բոլոր հրապարակական այգիների տեղը ողորմելի է, աւերված է, զարմանալի չէ որ քաղաքի փողոցներումն էլ չէ աճողվում տնկել ծառերը, որովհետեւ տնկելուց մի քանի շաբաթ չէ անցնում և բոլոր նորատունի ծառերը կտրատոււմ արմատից հանուճ, ոչնչացնում է ինքն քաղաքի ազգաբնակչութիւնը: Եւ ուշադրու-

թեան արժանի է, որ այդ աւերող, քանդող ոգին երկայնքով չէ, այլ հասակ առած մարդիկ են:

Ինչո՞վ բացատրել մեր ամբողջ մէջ այդ անմխիթար յատկութիւնը, այդ ձգտումը գէպի ամեն բանի աւերելը, — մենք չը գիտենք: Բայց որ այդ աւերող ոգին կայ մեր ամբողջ մէջ, — այդ անուրանալի է: Եւ շատ անգամ երբ մենք ասում ենք, թէ հրապարակական այգիները բուսականութիւն չենք տեսնում, որ քաղաքում, նոր այգիներ չենք հրապարակներում, ծառեր անկել թէ քաղաքի փողոցներում, թէ քաղաքի շրջակայ տարերի վրա, — վերջը մտածում ենք թէ այդ բոլոր աւերող է և դեռ շատ մաղ է... Եւ նոյն է, դա զուր աշխատանք է լինել... Ինչքան էլ ծառեր անկել, այգիներ, անտառներ զարգացնել, մեր ամբողջ աւերող ոգին չուտով կը փշաջնի, կոնչնացնի բոլորը:

Ինչպէս երևում է, պէտք է դեռ երկար տարիներ սպասենք, մինչև որ մեր ամբողջ քիչ թէ շատ քաղաքակրթվի, մինչև որ նրա մէջ կը ջնջվի բուսականութիւնը ոչնչացնող վայրենի, կատաղի, բարբարոս յատկութիւնը. դեռ պէտք է շատ սերունդներ անցնեն, մինչև կանհետանայ մեր ամբողջ բնութեան գեղեցիկ հարստութիւնը աւերելու ոգին...

Գուցէ ամբողջ մէջ բնութեան ամեն բարիքը աւերելու ձգտումը կարելի է բացատրել մասամբ և նրանով որ ասիական ցեղերի դժբաղդ, անմխիթար պատմութիւնը երբեք էլ չէ զարգացրել ասիացու մէջ հասարակական ոգի, ընկերականութեան, համայնական համերաշխութեան դարաւարդ: Պատմութիւնը դարձրել է ասիացուն եսական, անզուսպ և ամեն բան րօպէսպէս վայելելու, առանց ներշնչելու նրա մէջ իր նմանների մասին հոգաւորութիւնը, առանց զարգացնելու նրա մէջ ընկերական ոգին, ամեն քաղաքակրթ զարգացող ընկերական համերաշխութեան հիմքը կազմող ընկերական համերաշխութեան լայն և անհրաժեշտ դարաւարդ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«ԱՊՈՒՇԸ» (կեանքի պատկերներ) գրեց Արիփար Արիփարեան (Հայկակ). Կ. Պոլիս, 1886 թ.

Տաղանդաւոր երիտասարդ հեղինակի «Նորա-վէպը» կոչված վէպերից, որոնց քննադատութիւնը տպւեցաւ «Մշակի» մէջ, ընթերցողները իմացած են արդէն, որ Կ. Պոլիս հայ գրականութեան մէջ ծագել է մի նոր, թարմ ուղղութիւն, որից մինչև այսօր, դժբախտաբար, զուրկ էր այդ գրականութիւնը, և այդ ուղղութեան պարագլուխ է հանդիսանում պ. Արիփարեան իր կեանքից առած և նկարագրած պատկերներով: Ահա մեր առաջն դրած է յարգելի հեղինակի մի նոր երկա-սիրութիւնը, որը մենք միմ օւրախութեամբ և հետաքրքրութեամբ կարդացնելու, ուստի և մեր կարծիքը հաղորդել աւերող չը համարենք:

«Ապուշը» հոգեբանական խոր հետազոտութեամբ գրուած մի վէպ է, բայց նա նոր տիպեր, իդէալներ չէ ստեղծում, այլ պարզապէս կեանքից առած մի պատկեր է, որով Կ. Պոլիս ժամանակակից հայ հասարակութեան մէջ արմատացած մի քանի տեղը, վնասակար սովորութիւններ և երկողներ նկարագրելով, ցոյց է տալիս այն աղետալի հետեանքը, որը միշտ արտադրում են այդ անտեղի: «Ապուշը» նկարագրում է երկու գլխաւոր հասարակական անտառները և հեղու-թեամբ հարստանալու ծարաւը և ալաֆրան-կա ուսում տալու ձգտումը մասնաւոր ստորին դասի մէջ: Առաջին հետեանքը լինում է կատա-րեալ անանկութիւն և չքաղաքակրթ, վառ դե-կամենալով իր բաղդը շինել արժեթղթերի խա-զով, խաղաղողը կորցնում է և իր ունեցած չու-նեցածը, իսկ երկրորդը հետեանքը լինում է ան-բարոյականութիւն և անաւակութիւն: Այստեղից ստացվում է հետեանք բարոյական եղբայրաց-թիւնը—զուրկ եղբ և քուսնուհի, մի հետեւ է մի աշխատեք և քուսնուհիներն մօտային, ալա-ֆրանկա ուսում տալ, իսկ ստորին դասակարգի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԱՐՏԱՔԻՆ ԱՆԻ ԹԵՄԻ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՎԻՃԱԿԻ

Ահա յիշատակած մանկավարժի վկայութիւնը: «Հայերի մէջ մի այլատի արատաւոր հա-յիր դժուար թէ մի այլ տեղ գտնուին, պարսկա-կան շրջանի դժուար ազդեցութիւնը խոր հետքեր է թողել, որոնց ջնջելը երկար ժամանակի կարօտ է: Գալոցի դժբը ոչ մի տեղ այնքան դժուարա-կիր չէ, որքան այստեղ. ուսուցչի իրաւունքը մի-անդամայն բռնարարութեամբ է: Եւ դրա պատճառը եղել է մասամբ նոյն ինքն ուսուցչի չափաւոր ուսուցչիները ամեն բան թէ ուսումնականը, թէ հոգեկանը և թէ ֆիզիքականը ամենը թողել են թէ հոգաբարձու և թէ ոչ-հոգաբարձու աղաներին, այն աղաներին, որոնց նմանը չունի Կովկասը, վա-րուց պատմութեան տաճարած լինելով:

Վրաստանիցը, լաւ դրողը այստեղ նա է, որ չունի մի սկզբունք, չունի մի համոզմունք, չէ ծառայում մի ուղղութեան, չէ խորշում ստույգի-նից, կեղծաւորութիւնից, որ ամենքին խաբում է իրաւունքներն առանձին առանձին գովելով, չո-ղտործելով և չբալի» (այս) ասելով: Ամենքը այստեղ իրար ատում են, թշնամի են և ուսուցչի-չը պիտի ամենին էլ հաւանութիւն տայ, արդա-ւանքի և պաշտպանի: Չէզոքութիւնն էլ, ինչպէս և ճշմարտութեան ծառայելը, ասելի է, պէտք է

յայտնի ստել... Այս ընթացքը չէ թէ ներքին, այլ և սիրելի է տեղացեաց աչքին, ուստի հենց այս կերպ էլ ընթանում են տեղական ուսուցչիները: Եթէ մի ստոր, արհամարհելի մարդ կայ դպրոցա-կան տեսակետով, — այդ ուսուցչին է: Նա իրան տուած ուժովն մի այնպիսի երկնային ողորմու-թիւն է համարում, որ մարդն էլ չէ կարող անցկացնել, թէ յօգուտ դպրոցի այս ինչ և այն ինչ հարցում կարելի է ընդլայնանալ վնասակար առաջարկութեանց: Նա պիտի է դպրոց այնպէս, ինչպէս վաճառականը փող յափշտակելու համար դնայ վաճառատուն: Նրա համար ոչ թէ գոյու-թիւն չունի դիտութիւնը, մանկավարժութիւնը, այլ և ժողովրդի առաջ նոցա թշնամին է, յայտ-նելով որ այդ ամենը ստույգ չէ: Այդ պատճա-ռով եթէ հոգաբարձուն հրամայում է երկրորդ տարուայ պատրաստական դաստան աշակերտին պարսկերէնից, ուսուցչին չարաթական 4—5 դաս տալու, մինչև անգամ մայրենի լեզուից աւե-թիւն, նա համաձայնվում է ամենայն ակնածու-թեամբ... Զաւալ է տեսնել, որ աւարտածները, դիտութիւնից դուրի այսօր իրանք ևս ստում են դիտութիւնը, ընթերցարարութիւնը, որ դպրոցին վերաբերվում են զգուշացով, էլ չեն ասում թէ դէպի ուսուցչիները ինչպէս Գալոցը նոցա գու-լը միայն ֆարսերէն, ֆրանսերէն, ռուսերէն և հայերէն բառերի և կանոնների լատարան է դար-ձրել: Այս վիճակի մէջ գտնվող դպրոցի միայն վերն նկարագրած արդիւնքն կարելի է ստա-նալ:

Նախկին առաջնորդ հանգուցեալ Մուշեղեան արքեպիսկոպոսը հետեանք կերպով է նկարագրում իր հովուական այցելութեան ժամանակ Ուրմիշ հայերին. «Նրանք ոչ միայն դառն ուղղատ են, ոչ միայն նրանց քահանայները չեն հաւանում քրիս-տոնէական կրօնից, այլ, որ ցաւալին է, նրանք չեն խանում իրանց ազգային լեզուն, այլ խո-սում են թուրքերէն, այլ, կին երկապ:» (Տես «Մշակ» 1881 թ. № 243): Դառն տեղերում չը գիտեն ո՞վ է Գրիգոր Լուսավորիչ, ԼՅԺԺԺԺ, Կա-թողիկոս, մասնաւոր որ ոչ մի Կաթողիկոս ընտ-րութեան ժամանակ Ուրմիշ հայերը չեն մասնակ-ցում, հետեանք չեն խանում երբ է մեռնում Կաթողիկոսը, ընտրվում, ո՞վ է նա: Պատգամաւոր ուղարկելու իրաւունքը թեմի կողմից սեպակա-նացրել է իրան միայն թաւրէշ քաղաքը: Ոչ մի կապ չը կայ Սարգստաւանի և առհասարակ Պարսկաստանի հայերի և ԼՅԺԺԺԺ կաթողիկո-սութեան հետ. միակ կապը այն է, որ Կաթողի-կոսը նշանակում է առաջնորդ և ուղարկում է ս. միւսում:

Ազգային տեսակէտից բոլորովին ողբալի վի-ճակի մէջ են: Ազգակցական դարաւարդ բնաւ չը կայ. հայ պատմութիւն չը գիտեն, հայ լեզուն չտա տեղ անձանթ է. միայն անտունով քրիստո-նեայ են: «Ահաւանի մի ժողովուրդ, ասում է «Մշա-կի» թղթակիցը, որը մեծամասնութիւնը ոչ միայն թաւալում է թանձր տղիտութեան մէջ, այլ տա-րիներով լրկւում է ժամատացութիւնից, քահա-նայից, քարոզից և ուրիշ հոգեւոր միջնորդութի-ւնից: Ահաւանի մի ժողովուրդ, որը մեծագոյն մասը ոչ միայն դիւրեւում, այլ ընդարձակ գա-ւառներում դպրոցի երես տեսած չունեն, կան դիւրեւ, որոնց քահանայքը խոսում են ժողովրդի հետ թուրքերէն լեզուով, մինչև իսկ եկեղեցու մէջ: Դառն տեղերում ոչ քահանան և ոչ իսկ ժո-ղովուրդը հայութեան և քրիստոնէութեան վրա դարաւարդ անգամ չունեն: Ահաւանի մի ժողո-վուրդ, որ տղիտութեան երեսից բոլորովին ան-տիւրապաշտ և աւերողապաշտ է դարձել, հաւատ

ընծայելով ամեն տեսակ վիճակների, հմայողների, գուշակողների, թուլիների և գրեցնելի հեթա-նոսական պատգամներին և թախմաններին: Այս-կայն ո՞վ զգուշացնէ նրան այդ հաւագիտական ըզ-ձութիւններից, ո՞վ սովորեցնէ նրան սուրբ աւե-տարանի վարդապետութիւնը, ո՞վ քարոզէ նրան հայութիւն և քրիստոնէութիւն: Հովիւ չը կայ, որ ոչխարները նրա ձայնին լսեն...» («Մշակ» 1879 թ. № 173):

Բոլորեալ կան և կաթոլիկ մի սիւսաւր-ն էր զոր ծոռն է ու թիւնը:

Բնական է, որ այդպիսի ողբալի վիճակին են-թարկված ժողովուրդը շատ հեղուկութեամբ ընկ-նում է մարդորս քարոզչութիւն թակարդը և վեր-ջիններս առատ հոճն են անում: Առաջին ան-գամ 1830-ական թվականներին բողոքական քա-րոզչիները հաստատվել են Ուրմիշ գաւառում նե-տորական ասորիների մէջ քարոզելու և պրօպա-գանդա անելու. նոյնը և կաթոլիկ պատերնները՝ Սարմատի գաւառի մէջ նոյն նպատակով: Եւ եր-կար ժամանակ քարոզչիները իրանց բոլոր ուշա-դրութիւնը դարձրել էին ասորի սիրելիների և քի-զանի ժողովրդների վրա, այնպէս որ շուտով կազմվեցան բողոքական և կաթոլիկ ասորիների համայնքներ և հետզհետէ նուազում է նետորա-կան ասորիների թիւը: Վերջիններս քանի քանի անգամ ցանկանում էին մտնել հայ եկեղեցու հո-վանաւորութեան ներքոյ, բայց հայ հոգեւորակա-նութեան կողմից ոչ մի քաջալերութիւն, յոյս չը տեսնելով, իրենց երեսները դարձրին գէպի ու-սակաւն եկեղեցին, որը վերջերս ուղարկեց մի քանի ուղղափառ քահանայք և այժմ առաջ է գալիս մի նոր «օրթոդոքս ասորիների» համայնք: Ամերիկայի «Պոլիս» ընկերութեան միսիոնարնե-րը այդ յաջողութիւնից յետ» չը կամեցան բաւա-

վրա և ճանապարհի վրա սփռում էին ծաղիկները: Այցելելով դարձեալ մեղանների ուսումնարանները, Նոյա Մեծօրէնները և Բարձրութիւնները ուղևորվեցան երաձի կառքերով դէպի կոմս Շերեմետևի կուսակալի կողմէ կառավարող ճաշերու «Новое Время» լրագիրը հաղորդում է, որ արտաքին գործերի մինիստրի երկարատև արձակուրդը դէպի արտասահման տեղի կունենայ մօտաւորապէս յունիսի կէսին:

10 ՆՊՈՆ, 16 մայիսի: Ազատամիտների միտինգում Գլադստոն յայտնեց, որ համաձայնում է մտցնել իրլանդական բրիլի մէջ այն յօդուածը, որ թողարկում է մասնակցել իրլանդական պատգամաւորներին բրիտանական պարլամենտում, ոչ թէ միայն հարկային, այլ և ընդհանուր պետական հարցերի վերաբերմամբ:

ՓԱՐԻՋ, 16 մայիսի: Ներքին գործերի մինիստրը առաջարկելով ազգային ժողովին իշխանների վերաբերմամբ կազմած օրինագիծը, յայտնեց որ այն յոյսը թէ իշխանները կը յարգեն հանրապետութեան հիմնարկութիւնները, չարդարացաւ. բայց հակառակը յայտնվեց, որ նրանք օգտուում են ամեն դէպքով, որպէս զի կարողանան սպառնալ հանրապետութեանը: Մինիստրի խօսքերի դէմ աջ կողմը արմկալի բողոքներ յարուցեց: Ժողովը իշխանների մասին եղած օրինագիծը յանձնեց առանձին մասնաժողովին քննադատելու, Բազլիի առաջարկութեան հետ միասին իշխանների կաշտանները յաջողունա գրաւելու, ծերերի խնամատարութեան ֆօնդը կազմելու համար:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 մայիսի: Բարձրագոյն հաստատված է մինիստրների կողմէ տեղի որոշումը, որով Նարայալի մինչև կօստրօմա երկաթուղու գծի կառուցումն և նրա կէսպլուտատացիան յանձնվում է Մօսկվա-Նարայալի երկաթուղու ընկերութեանը: Բարձրագոյն հրամայված է այլ ևս չը նշանակել իրլանդացի, Սկոտլանդացի և Նիւ-Կիւսեմի քաղաքների պօլիցմէյստրների պաշտօնում նաւատորմի մէջ ծառայող օֆիցէրներին, այլ այդ պաշտօններում այսուհետև նշանակել ներքին գործերի մինիստրութեան մէջ ծառայող քաղաքական աստիճանաւորներին: Արտաքին գործերի մինիստրը երէկ վերադարձաւ Պետերբուրգ:

ՄՕՍԿՎԱ, 17 մայիսի: Երէկ թագուհի կայսրուհին և թագաժառանգ Զեսարիկիւն այցելեցին Մարիամեան կայսրանը դատարանի վճռով Սիբիր ուղարկվող անձանց դատակնիքի համար, իսկ Զեսարիկիւն բացի սրանց այցելեց թէ իգական և թէ արական դպրոցը, որոնց հիմնել է դուստն Նորին Բարձրութեան կաթնահասութեան իշխատակին: Ժամը երկուսին Նոյա Մեծօրէնները և Բարձրութիւնները ուղևորվեցին Մօսկվայից դէպի իլինսկօ, որտեղ կանցկացնեն մի օրվայ չափ:

10 ՆՊՈՆ, 17 մայիսի: Յունաստանի ախերի պաշարումն դադարեցնելու համար պետութիւնները կը սպասեն զինաթափութեան մասին տեղեկութեան: Համայնքների ժողովը որոշեց երկարացնել մինչև 1887 թվի վերջը այն օրէնքը, որի գործութեան իրլանդիայում արգելվում է դէպք կրելու: Իրլանդիայի ինքնավարութեան մասին բիլլի ընդունվելը աւելի հաւանականութիւն է ստանում:

ՎԻԵՆՆԱ, 17 մայիսի: Աւազների ժողովը միաձայն ընդունեց երրորդ ընթերցանութեան մէջ լանդշտադի մասին օրինագիծը:

ՏԱԵԿԷՆՏ, 17 մայիսի: Անգլիացիների ձեռքով Բադախանի գրաւելու լուրը այն պատճառով քիչ հաւանականութիւն ունի, որ Բադախան Աւգոստոսի նշանաւոր մասն է կազմում: Այդ լուրին առիթ տուողն էր երկն գնդապետ Լօկարտի Զինարարից անցրիական զինուորական ուղեկիցներով երթալը սահմանափակ յանձնաժողովին դիմադրելու համար:

Կ. ՊՈԼԻՍ, 17 մայիսի: Յունական սահմանագիծի վրա ընդհարումները շարունակվեցան մինչև մայիսի 15-ի երեկոն: Պաշտօնական տեղեկութիւններից երևում է, որ այլ և այլ ընդհարումներում թիւերից 180 մարդ սպանվեցան, իսկ

յոյների կորուստը աւելի նշանաւոր է կարծւում: Մալոնիկի բերված են 300 յոյն զինվորներ:

ՅԵՏԻՆԷ, 17 մայիսի: Այստեղ հասաւ և հանդիսաւորապէս ընդունվեցաւ Սուլթանի ներկայացուցիչ Սուլէյման-փաշան, որ Սուլթանի կողմից բերել է իշխանին «Նիշան-իմթիազ» ասված չքանչքան:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 մայիսի: «Journal de St. Petersburg» լրագիրը կարծում է, որ աչքի առաջ ունենալով Յունաստանի այժման անկեղծ վարկելու ձեռք, պաշարումը կը վերացվի:

ՆԵՐՉԻՆՍԿ, 18 մայիսի: Արգունի և Ամուրի վերին մասերում չինական պահապան դօրքերը ուժեղացրած են. իգնաչինի դիմաց գետնով են չինական 1,000 զինուորացի աւելի, երկն սահմանին մօտիկ տեղերի ընտելութիւնը գրաւելու համար:

ՄՕՍԿՎԱ, 18 մայիսի: Նոյա կայսերական Մեծօրէնները այցելելով իլինսկօ շրջակայքում գտնված Գալցին և Շչերբատով իշխանների կաշտանները, բարեհաճեցան ուղևորվել երէկ դէպի Պետերբուրգ Նիկոլայեւսկի երկաթուղու իմկի կողմէ կայսրանից:

ՎԵՆԵՑԻԱ, 18 մայիսի: Խօսքն աստիճանում է այստեղ: Երէկ իրանդացան 33 հոգի և 21 հոգի մեռան:

ԲԵՐԼԻՆ, 18 մայիսի: Երէկ ժամանեցին այստեղ Մեծ իշխան Վլադիմիր Ալեքսանդրովի, իր ամուսնու հետ: Այսօր առաւօտը Նորին Բարձրութիւնը այցելեց կայսր Վիլհելմին, որ փոխարքած այցելութիւն գործեց մի և նոյն առաւօտը: Սրանից յետոյ Նոյա Բարձրութիւնները հրաւիրված էին կայսրի մօտ ընտանեկան հացիկերային և այսօր ուղևորվում են դէպի Պետերբուրգ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Մայիսի 19-ին			
Ռուսաց 1 լուր	Լօնդօնի վրա արժէ	231 1/2	պէն
— — —	Համբուրգի վրա —	200	պֆ.
— — —	Փարիզի վրա —	247 3/4	սան.
Ոսկի —	արժէ —	8	ր. 34 կ.
Մաքսային կուտօններ —	— — —	8	> 35
Արծաթ —	— — —	1	> 24
Բօրային դիսկոնտներ —	— — —	3 3/4	և 6%
Պետակ. բանկ. 5%	տոմս 1-ին շրջանի 101	> 12	կ.
— — —	— — —	2-րդ —	101
— — —	— — —	3-րդ —	101
— — —	— — —	4-րդ —	101
— — —	— — —	5-րդ —	101
Արեւելեան 5%	փոխառութ. 1-ին շրջ. 101	> —	
— — —	— — —	2-րդ —	100
— — —	— — —	3-րդ —	101
Ներքին 5%	առաջին փոխառութ. 241	> 75	
— — —	երկրորդ —	225	> 75
5 1/2%	բէնտա	105	> 25
Ոսկի արք. բէնտա	— — —	186	> 50
Նոր կոնսօլիդաց. փոխառութիւն	— — —	157	> —
50% զբաւակն. թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ.	— — —	162	> 25
5 1/2% զբաւակն. թղթեր խնրօնի կալուած. բանկ.	— — —	99	> —
60% զբաւակ. թղ. խարկօլի կալ. բան. 102	> 50		
— — —	Պօլտավայի —	102	> 50
— — —	Պետ. Տօրակ. —	102	> 50
— — —	Կիւիլի —	102	> 75
— — —	Մօսկվայի —	103	> —
— — —	Բեռլինի —	102	> 25
— — —	Նիտ. Սամար. —	102	> 75
— — —	Վիլնայի —	102	> —
— — —	Թիֆլիսի —	27 և 43	տ. 97
— — —	Քուրթայի —	18 և 43	տ. 97
Վ. օրօսի-կամակի բանկի ակցիաները 515	> —		
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ. 257	> 50		
Իրլանդ-Վ. օրօսի ընկ.	— — —	85	> —
Ս. Պետերբուրգի քաղաքային օրլի-գալաններ.	— — —	92	> 50
Մօսկվայի քաղաք. օրլի-գալաններ	— — —	95	> —
Օրէնայի — — —	— — —	96	> 25
Ս. Պետերբուրգի բօրսայի արամադրութիւնը աւելի թոյլ է:			

Վ. օրօսի-կամակի բանկի ակցիաները 515	> —
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ. 257	> 50
Իրլանդ-Վ. օրօսի ընկ.	85 > —
Ս. Պետերբուրգի քաղաքային օրլի-գալաններ.	92 > 50
Մօսկվայի քաղաք. օրլի-գալաններ	95 > —
Օրէնայի — — —	96 > 25
Ս. Պետերբուրգի բօրսայի արամադրութիւնը աւելի թոյլ է:	
Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՇԵՐՈՒՆԻ	

ԽԱՐԿՈՎ ԴՆԱՅՈՂ ՆԵՐԻՆ

Իրենայա փողոցում: Նօմէրները 75 կօպէկից մինչև 5 լուրբի: Քաղաքի կառավարները անախորժութեամբ տանում են Վալդայից ճանապարհորդներին, որովհետև այստեղ «на чай» չեն տալիս: Իսկ մեր հիւրանոցն ունի Վալդայում սեփական ԿԱՌԳ: Օտէլում կայ ՎԱՆՆԱՆՆԱՆ կոնոու և արտասահմանի ԼՐԱԳԻՆՆԵՐ և ԲԻԼԻՍԵՐԳ: Առաջնակարգ ԲԵՍՏՕՐԱՆ: Խոհանոցը գտնվում է Մօսկվայի Երմիտաժ Բէստօրանի հմուտ խոհարարի ձեռքում: Ճաշը 60 կօպէկից մինչև 1 լուրբի 50 կօպ: Նախաճաշիկ 30 կ., ընթրիք 40 կ.: Ցան օրից աւելի մնացողներին անհում են գիշում: Գնեւրը ձեռնառու են:

Հասցէն ԲՈՒՖ, Իրենայա փողոց ԽԱՐԿՈՎՈՒՄ:
Բէստօրանի մէջ կայ «Որկէստրիօն-Մօնսոն»:

1—10 (Կ. Շ.)—(Տ)

Մարիամ Գալթեան ՊՊՊՈՎ և Աւետիք Զօլհանիսեան ՊՊՊՈՎ, սրտի ցաւով յայտնելով առաջինը իր ամուսնու, իսկ երկրորդը իր եղբոր ՍՊԻՐԻԴՈՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՊՊՊՈՎ, իմաստ, խնդրում են ազգականներին և ծանօթներին ներկայ գտնվել հանգուցեալի յուզարկաւորութեամբ, իր սեփական տանից, Վալդայեւսկի փողոցի վրա, դէպի ՄՈՂՆՈՒՍ ԵՐ. Գէորգ եկեղեցին, Կիրակի օր, մայիսի 25-ին, առաւօտեան 10 ժամին:

ՅԻՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

(N. PAQUET ET COM.)

Զորեքշաբթի, մայիսի 28-ին, «ԱՆԱՏՈԼԻԱ» (ANATOLIE) շոգինաւը, նաւապետ ԲՕՇԷԼ (BOSCHEL) գլուխ կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կ. Պօլիս և Մարսէյ: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում պ. Գարանիօնի և Թիֆլիսում պ. Բէնօնի, նախկին Արծրունու գալլերում, № 103.

ԹՈՅԼՏԻՈՒԹԵԱՄԲ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԱՅՐԱԲԱՂԱՔԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Եւգենի-Մելանգ. Մազերի արագ և առատ բուսացնելու համար և նրանց պահպանելու թափփուր: Գինը 2 ր. սրտակի համար, գործածութեան հրահանգի հետ միասին, ուսուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով:

Հոտութեամբ, նոյնպէս կաշու անհարթութիւնը և բիծերը ոչնչացնելու: Գինը 1 ր. 75 կ. սրտակի համար, գործածութեան հրահանգով ուսուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուներով:

Կարմրաբերդ—Eugénie. Նեղուկ թուշերին և ականջներին բնական վարդի գոյն տալու, որ չէ փոխվում էլէկտրական լուսաւորութեան ժամանակ և որ չէ արթնում երեսի քրտնից: Առաջարկվում է մանուսնող թատրոնների և պարահանդէսների համար: Գինը 1 ր. 50 կ. սրտակի համար, գործածութեան հրահանգով ուսուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով:

Այդ բոլոր երեք կօմօտիական արդիւնքները բժշկական վարչութեան վկայութեամբ, չեն պարտաւորում իրանց մէջ որ և է վնասակար նիւթեր:

Բէրլին Րիս.

ԱՐՏՈՆՈՒԹԻՒՆ ՍՍՏԱՍՏ ՊՈՄԱԴ

Իսկական «Pasta Eugénie», գերազանց միջոց կաշու ամեն տեսակ բծերի, և երեսի վրա պատահող ուրիշ անախորժ երևոյթների դէմ: Տալիս է երեսի գոյնին երկատարակական թաթմութիւն և գերեցկութիւն: Գինը մի սրտակի համար 1 ր. 60 կ.

Քինին-գլլէրիներն պօմադ պերուական բալզամից, մազերը սնդալանելու, խտացնելու և մեծացնելու համար: Գ. 2 ր. սրտակի համար:

Զեռքերի պօմադ: Գինը սրտակի համար 1 ր. 30 կ.: Խաբարանչիկ սրտակի վրա գտնվում է պաշտպանողական դրոշմ, մի «հրեշտակ» և հնարող ստորագրութիւն «Bertha Ries».

Իսկական «Poudre-Eugénie» սպիտակ և վարդագոյն փոշի. Գ. արդիլիկ, վրձնող 1 ր. 50 կ., առանց վրձնի 1 ր. 20 կ.

Մազերի ներկը երեք գոյնի. սև, շագանակագոյն և բաց-չէկ. Գ. արդիլիկ 3 ր. Ներկը «Բիւ-Գալտանի» գործարանի:

Կլիտեր պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ գտնվում է Վ. Գրիվնակի ղեկավարած ապրանքների մագազինում, Վիլնօն, հիւրանոցի տակ, Զուբալովի տանը:

37—100

Съ 10-го числа настоящего мѣсяца начался приемъ объявленій для напечатанія въ „БАТУМСКОМЪ ЛИСТКЪ ОБЪЯВЛЕНІЙ“, предназначае-момъ для БЕЗПЛАТНОЙ разсылки, въ числѣ до 5,000 экземпляровъ, во мно-гіе мѣста Россіи и за границу. Плата за объявленія въ „ЛИСТКЪ“: до трехъ разъ—по 7 коп. за мѣсто, занимаемое строкою обыкновеннаго шрифта, отъ трехъ до ДЕСЯТИ разъ—за скидкою 15%: СВЕРХЪ ДЕСЯТИ разъ—по соглашенію, но не менѣе 4 коп. за строку, или занимаемое ею мѣсто. Об-ращаются въ БАТУМЪ, къ ПЕТРУ АЛЕКСАНДРОВИЧУ ЛОВКО.

П. А. ЛОВКО

2—3

Въ редакціи газеты „МШАКЪ“ продаются слѣдующія брошюры:
1) „Экономическое Положеніе Турецкихъ Армянъ“, публич. лекціи Д—ра Григо-рія Арируни, переводъ съ армянскаго А. Аракелянца. Цѣна 25 коп.
2) Die Oekonomische lage der Armenier in der Türkei, ein öffentl. Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von A. Amiranjanjanz. Preis 25 kop.
3) Die Hungersnoth in Türkisch-Armenien, ein Vortrag von Dr. Grigor Arzruni übersetzt von Amiranjanjanz. Preis 20 kop.
Иногородные, желающіе получить брошюры, благоволятъ присылать по 30 коп. почтовыми марками, за каждую брошюру.
Адресъ. Тифлисъ, Редакція „Мшакъ“, или Tiflis, Redaction „Mschak“.

4—25

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Ր

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԳ

Յանն է առնում թարգմանիկ ֆրանսերէնից, գերմաներէնից և անգլիերէնից մատչելի գնեցով: Հարցնել «ՄՇԱԿԻ» խմբագրատանը:

25—100

ՀՕԿՈԼԵԴ

Ս. ՍԻՈՒ Կ ԸՆԿ.

(Ս. 4857.) 13—50 (Կ)